

«ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Բանասիր. գիտ. դոկտոր Ե. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

1872 թ. հունվարի 1-ին Թիֆլիսում, Գրիգոր Արծրունու խմբագրությամբ լույս տեսավ «Մշակ» լրագրի առաջին համարը:

Անդրադառնալով «Մշակի» կատարած գործին, Րաֆֆին ժամանակին գրել է. «...Յուր բոլորովին թարմ, երիտասարդ խմբագրի ղեկավարության ներքո «Մշակը» հեղեղեց հասարակությունը մի նոր կենդանացուցիչ հոսանքով, որ ամենափոքր ժամանակում արդասավոր արդյունք ունեցավ... Ինքնաքննությունը և ինքնաճանաչությունը — ահա այն դրդող և առաջ մղող տեսակետը, որով սովորեցրեց նա հայ հասարակությանը մտածել յուր պետքերի և յուր թերությունների վրա»¹:

«Մշակի» պատմական դերն ու նշանակությունը առավել ևս ակնառու է դառնում, երբ հաշվի ենք առնում այդ շրջանում արևելահայ պարբերական մամուլի անմխիթար վիճակը: Վաղուց դադարել էր «Հյուսիսափայլի» հրատարակությունը, փակվել էր «Հայկական աշխարհը»: Հրապարակի վրա էր պահպանողական «Մեղու Հայաստանին»:

«Մշակի» ոգին նրա հիմնադիր և տաղանդավոր խմբագիր Գրիգոր Արծրունին էր (1845—1892), եվրոպական հիմնավոր կրթություն ստացած, բազմակողմանիորեն զարգացած մի մտավորական: Բարձրագույն կրթությունը Արծրունին ստացել էր Գերմանիայում, եղել էր Ֆրանսիայում, Իտալիայում, Շվեյցարիայում: Նա տիրապետում էր ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն լեզուներին, ծանոթ էր ռուս, եվրոպական գրականության նվաճումներին, ժամանակի հասարակական-քաղաքական հոսանքներին: Գրիգոր Արծրունին իրականության խոր զգացողությամբ օժտված հասարակական գործիչ էր, պատրանքներով չտարվող ռեալիստ մտածող: Նա համարձակությամբ և աներեր կամքով պայքարում էր այն ամենի դեմ, ինչ հին էր, դարն ապրած, ինչ արգելակում էր նորի, առավել առաջադիմականի հաղթանակին: «Մշակի» գործունեության մեջ համազգային, համադեմոկրատական նշանակություն ունեցող արժեքավոր շատ բան կա, որով և այն բարձրանում է իր պաշտպանած նեղ դասակարգային շահախնդրություններից:

1

«Մշակի» հրատարակության առաջին շրջանը նշանավորվեց Անդրկովկասում բուրժուական հարաբերությունների զարգացմամբ և ամրապնդմամբ: Լրագիրը հենց սկզբից հանդես եկավ բուրժուական արտադրանական, բուր-

¹ Ր ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հատ. 10, էջ 158:

ժուռա-դեմոկրատական կարգերի կրքոտ պաշտպանությամբ: Գրիգոր Արծրունին քաջ գիտակցում էր, որ այդ է իսկական ու հետամնաց հայ իրականության լուսավորման և համակողմանի եվրոպականացման ուղին: «Մշակը» ողջունեց առաջին գործարանների երևան գալը Անդրկովկասում, 1872 թ. Խիֆլիս-Փոթի երկաթուղային հաղորդակցության սկիզբը դիտեց որպես առաջընթաց քայլ երկրի տնտեսական զարգացման ասպարեզում: Որպես տնտեսագետ Գրիգոր Արծրունին աշխատում էր տեսականորեն հիմնավորել բուրժուական հարաբերությունների զարգացման պատմական անհրաժեշտությունն ու հաղթանակի անխուսափելիությունը: «Մշակը» առաջադրում էր տնտեսական մի ամբողջ ծրագիր. «Մենք պետք է վերջապես կապվենք մեր երկրի հետ,— գրում է Արծրունին,— ստանանք հարստությունը երկրից, մշակելով մեր երկրի հանքային, երկրագործական և այգեգործական հարստությունները, հասցնենք մեր արհեստները ֆաբրիկացիայի ձևին: Երկիրը արդյունաբերող է անվանվում, երբ նա օգտվում է իր բնական բոլոր հարստություններից, արդյունաշահվում, մշակում է այդ հարստությունները և արտահանում է իր բերքերը և իր գործարանական, արհեստագործական արդյունքները դեպի օտար երկրները: Երկիրը այն ժամանակ է հարուստ համարվում, երբ նա ավելի արտահանում է, քան ներմուծում»²:

Առաջադրելով երկրի տնտեսական զարգացման ծրագիրը, «Մշակը» միաժամանակ նշում էր այն իրականացնելու համար անհրաժեշտ իրական, գործնական քայլեր: Հարկավոր է հայ կյանքի արմատական վերափոխություն: Չուխայավոր, ասիական վաճառականությունը պետք է տեղի տա լուսավորյալ, եվրոպական վաճառականությանը: Քանի ուշ չէ, հայ բուրժուազիան պետք է հրաժարվի տնտեսությունը վարելու հին, մեռյալ ձևերից, շրջանառության մեջ դնի կուտակած գումարները, ստեղծի ակցիոներական ընկերություններ, այլապես «քամու բերածը քամին էլ կտանի»:

Բուրժուական արտադրանքային, հասարակական նոր փոխհարաբերությունների հաղթանակը Անդրկովկասում և Հայաստանում անխուսափելի անհրաժեշտություն էր: Հետևաբար, «Մշակի» կողմնորոշումը համընկնում էր հասարակության զարգացման օբյեկտիվ ընթացքին և այս առումով այն պատմականորեն առաջադիմական էր: Ծիշտ չէ որոշ ուսումնասիրողների այն կարծիքը, որպես թե Արծրունին չէր տեսնում այն ստվերոտ կողմերը, որ իր ետևից բերում էին բուրժուական նորաստեղծ հարաբերությունները: «Որքան թշվառություն կա մեր շուրս կողմը,— գրում է Արծրունին 1888 թ.— հարկավոր է փոքր ի շատե գիտող աչք ունենալ այդ ճշմարտության մեջ համոզվելու համար: Հեռու չգնանք, Խիֆլիսի, Երևանի ետ ընկած փողոցներում մենք կհանդիպենք այնպիսի սրտամաշ տեսարանների, որոնք պակաս չեն այն նյութական թշվառությունից, որ կարողում ենք թուրքահայերի մասին»³: «Զգալուն մարդու սիրտը ակամա ցավում է,— մի այլ անգամ գրում է Արծրունին,— երբ նա տեսնում է, թե ինչպիսի կյանք է վարում մեր հասարակության ստորին դասակարգը, մեր ամբոխը, մանավանդ մեր մեծ քաղաքներում»⁴: Նրա հավաստմամբ մեր

² Գ. Ա., Վաճառականությունը մեր մեջ (առաջնորդող), «Մշակ», 1890, № 63:

³ «Մշակ», 1888, № 36:

⁴ Գ. Ա., Մեր ամբոխը (առաջնորդող), «Մշակ», 1886, № 10:

աղդի հարուստ և աղքատ դասակարգերը այնքան օտար են իրարու, «կարծես քե նրանք երկու միմյանց հակառակ բանակներ են, երկու տարբեր ազգություններ»:

«Մշակը» բաղմիցս անդրադարձել է այն հեղաբեկումներին, որոնց ենթարկվում էր հայ գյուղը բուրժուական հարաբերությունների զարգացման հետևանքով՝ հողապականություն, աղքատություն, պանդխտություն: Արևմտահայ գյուղացին լքում էր հայրենի հողը, որովհետև հայրենիքում իսպառ բացակայում էր աշխատանքի և կյանքի, վաստակի և ունեցվածքի ապահովությունը: Արևելահայ գյուղացին պանդխտում էր աղքատությունից, կարիքից հարկադրված: Պանդխտությունն, ըստ Արծրունու «բռնաանտեսական պատնառներ ունի»: Թող որ պալյաաիվ լինեն լրագրի առաջադրած ղեղատոմսերը, բայց փաստ է, որ մատը վերքի վրա է դրված: Կապիտալիզմի զարգացումն իր ետևից բերում էր սոցիալական հակասությունների սրում, դասակարգային պայքար, բանվորական հարց... «Մշակը» առաջին լրագիրն էր մեղանում, որ անդրադարձավ եվրոպական բանվորական շարժմանը, ինչպես և առաջինը, որ իր էջերում տեղ տվեց Բաբվի բանվորների ծանր դրությունը նկարագրող Շիրվանղաղեի ակնարկաշարին:

Քննադատելով ապաղգայնացած բուրժուական մտավորականությունը, «Մշակը» կծու խոսքերով պախարակում էր նրան, առաջադրելով դեմոկրատական, լուսավորական մի ամբողջ ծրագիր. «Մենք մեր գործունեության մեջ միշտ կանգնել ենք և կկանգնենք ժողովրդական հողի վրա, — գրում է Արծրունին, — կհենվենք ժողովրդական տարրի վրա: Ուրեմն մեր գործը հաջողությամբ առաջ տանելու համար մեզ անհրաժեշտ են քառմ ժողովրդական մարդիկ, ժողովրդից դուրս ելած մարդիկ և ոչ քե փախսեցիներ»⁵:

Մեծ համարում ունեն Արծրունին ժողովրդի ստեղծագործական կարողությունների մասին: «Ամբոխի անսպառելի հանձարը, — գրում էր նա 1875 թ., — իր թարմ ստեղծագործական ուժով անդադար նորոգում է հասարակական բարձր դասակարգերի՝ հետզհետե անշարժության և մտավոր անբերության մեջ ընկնող զորությունը»⁶:

Ի վերջո, ո՞րն էր «Մշակի» պաշտպանած հասարակական իդեալը, ինչպե՞ս էր պատկերացնում այն Արծրունին: Ահա Թիֆլիսը 200 տարի հետո: «Քաղաքը ճանաչել չի կարելի, — կարդում ենք «Մշակի» 1879 թ. № 54-ում: — Քաղաքի շորս կողմը երևում են ֆաբրիկաներ և գործարաններ, մաքուր փողոցներ, ուսումնարաններ, երկաթուղիներ... մարդիկ մաքուր հագնված, ոչ մի մուրացկան չկա, ամենքը ունևոր են երևում, ամենքի երեսի վրա երևում է բավականություն, իր վիճակով գոհ լինելը: Ամենքը գործունյա աշխատող են: Ամենքը հողում են թե՛ անձնական, և թե՛ ընդհանուր օգուտների մասին: Ոչ մի անդրադետ, ոչ մի անգործ, ոչ մի տգետ մարդ չկա: Նախանձ, միմյանց դեմ ատելություն, միմյանց վնասել, դրանք անհասկանալի բառեր են դարձել: Մարդիկ չեն հասկանում թե ինչ բան է անշարժություն, խավարամտություն, սնոտիապաշտություն, նախապաշարմունք: «Մշակը» 200.000 տիրած ունի:

⁵ «Դարձյալ մի տարի վերջացավ» (առաջնորդող), «Մշակ», 1877, № 95 (այս և հետագա բոլոր էջերում առանց հատուկ նշման ընդգծումները մերն են — Ե. Պ.):

⁶ «Մշակ», 1875, № 19:

...«Մշակի» ֆելետոնիսուժը խմբագրությունից ռոճիկ է ստանում, իր սեփական տունն ունի: Գրական աշխատանքը գին ունի, սաստիկ գնահատվում է»:

«Մատնանշելով կապիտալիստական դարդացման ուղին, նադարյան լուսավորիչը,— գրում է ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը,— ելնում էր ոչ թե ռուսահայ բուրժուազիայի հասակարգային շահերը պաշտպանելու մեղ մտահոգությունից, այլ ռուսահայ հասարակական կյանքի բուրժուական ուղու հետ լծորդված ազգի ընդհանուր բարեկեցության, նրա համախմբման ու ինքնապահպանման մղումներից»⁷: Թվում է թե այս ճիշտ միտքը կարելի է վերագրել նաև Արծրունուն:

2

Հասարակական հին հարաբերությունների և այն օրինականացնող գաղափարախոսության՝ պահպանողականության դեմ «Մշակը» ծավալեց երկարատև, անդիջում պայքար: Քիչ է ասել, թե դա բուրժուական երկու հոսանքների ներդասակարգային պայքար էր ռեֆորմների չափի և ձևի շուրջը: «Մշակի» և «Մեղվի» պայքարի բովանդակությունը շատ ավելին էր: Դա պայքար էր առաջադիմության և անշարժության, լույսի և խավարի, եվրոպական լուսավորության և ասիական հետամնացության ու ազգային սահմանափակության միջև: Այս ուղղությամբ «Մշակը» շարունակում էր «Հյուսիսափայլի» մեզ ծանոթ ավանդույթները: Դարավոր հետամնացության և անշարժության դատապարտված հայ կյանքն, ըստ «Մշակի», կարիք ուներ էական, լուրջ վերափոխությունների, համակողմանի եվրոպականացման: Պայքարը հին հարաբերությունների բոլոր արտահայտությունների դեմ, ալսպիսով, կենսական խնդիր էր. ինֆեմալիզմը և ինֆեմանաշուրյունը «Մշակի» կողմից ազդարարվում էին որպես առաջադիմության գործոններ: «...նստությամբ քննադատել հայի պակասությունները, անխնա մտրակել և անողորմ կերպով մերկացնել այդ պակասությունները՝ «Մշակի» ուղղության, պրոգրամի էական մասն էր կազմում»,— երկու տասնյակ տարի հետո, հավատարիմ ազդարարած ուղղությանը, գրում էր Արծրունին⁸:

«Մշակում» տպագրված իր մի շարք առաջնորդողներում Արծրունին աշխատում էր տեսականորեն հիմնավորել այդ պայքարը: «Կյանքը՝ կռիվ է, մարտում է հնարավոր երջանկության համար, ամենաանհրաժեշտ մարդկային իրավունքների համար, հնարավոր նյութական բարօրության համար»,— գրում է Արծրունին:

«Մշակի» և «Մեղու Հայաստանիի» պայքարը Արծրունին և ժամանակակիցները դիտում էին ոչ թե իբրև մասնավոր, անձնական շահերից բխող տարածայնությունների արդյունք, այլ հնի և նորի, առաջադիմության և անշարժության բնականոն կռիվ: Մշակականների խորին համոզմամբ պահպանողականությունը հայ հասարակության առողջ մարմնի վրա վտանգավոր խոց է, որ պետք է անհապաղ հեռացվի: Արծրունին պախարակում էր հայ հասարակու-

⁷ Ա. Գ. Հովհաննիսյան, XIX դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 37—38:

⁸ Գ. Ա., Պետք է քննադատել և ոչ ընդհանրացնել (առաջնորդող), 1890, № 3:

թյանը, որ «Մեղվի» խմբագրին արժաթե պսակ է շնորհում, իսկ Բաֆֆու, Պատկանյանի, Պռոշյանի նման գրողների, «որոնք իրանց դրվածքներով մարտընչում են ամեն հնության դեմ, գործում են որպես առաջադիմության ղինսորներ», անուշադրության է մատնել:

Նլնելով ինչ որ հին է լավ է սկզբունքից, պահպանողականները դեմ էին դպրոցի, եկեղեցու վերանորոգությանը, կոչ աղատագրությանը⁹: «Մշակը» համարձակորեն առաջադրում էր հայ կյանքի այդ կարևոր հաստատությունների վերափոխման մի ամբողջ դրական ծրագիր:

«Մշակը» հենց սկզբից հանդես եկավ որպես Անդրկովկասյան ժողովուրդների համերաշխության, բարի դրացիական հարաբերությունների ջերմ պաշտպան: 1889 թ. «Հայեր և վրացիք» առաջնորդողում Արծրունին շարադրել է լրագրի ճիշտ դիրքորոշումն այս հարցում: «Մշակի» հրատարակության առաջին տարվանից, — գրում է նա, — մենք այն միտքն ենք հայտնել, թե Անդրկովկասի մեջ ապրող բոլոր ազգությունները՝ հայերը, վրացիք, թուրքերը, կապված լինելով միևնույն երկրի շահերի հետ, պետք է միմյանց փոխադարձաբար ուսումնասիրեն, պետք է իրար մեջ համերաշխ լինեն, պետք է հասկանան, թե իրանց բոլոր ինտերեսները ընդհանուր են, թե այն ինչ օգտավետ է մինին, օգտավետ է մյուսին, ինչ վնասակար է մինին, վնասակար պետք է համարվի մնացածներին»¹⁰:

«Մշակը» սկզբից ևեթ հանդես եկավ որպես խաղաղության պաշտպան լրագիր: Արծրունին 1880-ական թթ. ծավալված համաեվրոպական ռեակցիայի արտահայտություն էր համարում բուրժուական մեծ պետությունների սպառազինության մրցավազք: Նա նշում էր, որ այժմ «եվրոպական լուսավոր պետությունները պարծենում են իրանց ղենքի թվով, իրանց ղորանոցների շատությամբ, վառողի և հրացանների պաշարով և ամրոցների անմատչելիությամբ»: Արծրունին գտնում էր, որ «պատերազմի գաղափարը ատելի է ամեն մի մտածող մարդի համար» և ամենևին չէր տարակուսում, որ կգան այն երանելի ժամանակները, երբ «մարդկությունը ոչ թե միայն նվաճողների արձանները կփանդե, բայց և ամենամեծ անեծքը կհայտնե նոցա հիշատակին»:

1880-ական թթ. ծայր առած համառուսական ռեակցիայի արտահայտություն էր ցարիզմի վարած ազգահալած քաղաքականությունը, որ առանձնակի ուժով գործադրվեց հայերի նկատմամբ (հայկական դպրոցները փակելու հրաման, աղատագրական շարժման հետապնդում և այլն):

Ռուսաստանում մոլեգնող, Ալեքսանդր III-ի գլխավորած ռեակցիոն քաղաքականության մասին Արծրունու ակնարկներում հիանալիորեն դրսևորված է ոչ թե ցարահաճ, այլ բռնությանը և ռեակցիային հակադրվող աղատամիտ խմբագիրը:

Գրիգոր Արծրունին, րստ Բ. Կնունյանցի, «կարող և բարձր տաղանդով օժտված հրապարակախոս էր», որի խմբագրած «Մշակը» ղգայուն կերպով

9 Գ. Ա., Կնոչ էմանսիպացիա, «Մշակ», 1889, № 14:

10 Գ. Ա., Հայեր և վրացիք (առաջնորդող), «Մշակ», 1889, № 38 (ընդգծումները հեղինակինն են):

ունկնդրում էր հասարակական երևույթներին, հայկական կյանքին: «Մշակը» արտահայտում էր «ազատամտության մի ամբողջ դրական ծրագիր»¹¹:

3

«Մշակը» ընդարձակեց, լայնացրեց հայկական աշխարհի նեղ հորիզոնը,— գրում է Րաֆֆին:— Ոչ միայն ոռոսաստանցի, այլև ամենուրեք, ուր որ հայեր էին ապրում, բոլորի գործերն ու կյանքը նրա քննության առարկա դարձավ»: «Մշակի» հեղինակությունն առանձնապես բարձրացավ 1877—1878 թթ. ոռոս-թուրքական պատերազմի տարիներին, երբ հրապարակ իջավ արյունոտ հայկական հարցը: Մամուլը, պոեզիան, վիպագրությունը, հրապարակախոսությունը համակված էին մի աննախագեղ խանդավառությամբ: Ռուսական բանակաները 1877 թ. գարնանը անցել էին սահմանը և մտել արևմտահայ գավառները: Թվում էր, թե վերջապես իրականանալու է ժողովրդի դարավոր իղձը՝ Արևմտյան Հայաստանը կադատագրվի սուլթանական լծից, անկախություն կստանա և կամ կմիակցվի Արևելյան Հայաստանին: Պատերազմի շրջանում և հետագա տարիներին արդեն ամենօրյա «Մշակում» տպագրվում էին Րաֆֆու «Ջալալեդդին», «Խենթը» վեպերը, արևմտահայ կյանքի կարևոր իրադարձությունների մասին (1876 թ. Վանի հրդեհը, 1878 թ. Ջեյթունի ապստամբությունը), կարևոր այլ հաղորդումներ և բազմաթիվ թղթակցություններ: Առանձնակի բեղմնավոր գործունեություն ցուցաբերեց «Մշակի» Պոլսի թղթակից Հայկակը՝ Արփ. Արփիարյանը:

Հայ ժողովուրդը թեկոխել էր բուրժուա-դեմոկրատական, ազգային-ազատագրական շարժումների նոր շրջան:

Այդ շարժումները, որ առանձնապես լայն ծավալ ստացան 1860—1870-ական թթ., նպատակ ունեին ազատագրել Արևմտյան Հայաստանը Օսմանյան բռնապետության տիրապետությունից, ժողովուրդը՝ դաժան ճնշումներից ու կեղեքումներից: Սուլթանական Թուրքիայում հայ ժողովրդի դրությունը ծանր էր, օրհասական: Ժողովուրդը շնչաբեկ էր լինում թուրք հարստահարիչների վայրագ ճնշումներից ու հալածանքներից: Բռնությանմբ, անպատիժ կերպով հափշտակվում էր գյուղացու վաստակը, հողը, ունեցվածքը, ոտնահարվում պատիվը: Այս ամենը, բնականաբար, հայ ժողովրդին մղում էր ընդվզման, դիմագրավման: Արևմտահայ ազատագրական շարժումները բնաբուխ շարժումներ էին, սոցիալ-քաղաքական որոշակի հանգամանքների արդյունք: Այստեղ, ստեղծված օբյեկտիվ պայմանների պատճառով, պայքարը ընթանում էր, լենինի խոսքերով ասած, «թե՛ ընդհանրապես քաղաքական, և թե՛ մասնավորապես ազգության իրավունքների համար»¹²: Արտակարգ եռանդ և բեղմնավոր գործունեություն ցուցաբերեց Արծրունին: Այս տարիներին «Մշակում» տպագրվում էին նրա մարտական առաջնորդողները («Այժմ կամ երբեք», «Արևելյան խնդիր», «Թուրքիայի հանցանքը», «Ռուսաստանը և Թուրքիայի հայերը», «Դասից օգուտ քաղենք», «Ջեյթունի ապստամբությունը» և այլն), Րաֆֆու ցասկոտ հոգվածները: Արծրունու՝ հայկական խնդիրը շոշափող

¹¹ «Бакинские известия», 1903, № 44.

¹² Լենին, Երկեր, հատ. 20, էջ 499.

հողվածաշարի հանդուցալին հարցը արևմտահայ ժողովրդի ազատագրությունն է։ Հայ ժողովրդի ֆիզիկական դոյությունը Թուրքիայում վտանգի տակ է։ Բալկանյան ժողովուրդները ազատագրվել են. մի՞թե այժմ հայերի հերթը չէ։ Միակ ելքը ապստամբվելն է։ Մեր հույսը Ռուսաստանի վրա է։ Նա մեզ կօգնի։

Ջերմորեն ողջունելով Բալկանյան ժողովուրդների պայքարը սուլթանական լծի դեմ, Արծրունին գտնում էր, որ հայերը ևս պետք է նրանց օրինակին հետևեն։ Այս և հետագա տարիներին արևմտահայության ազատագրությունը Գրիգոր Արծրունին կապում էր բացառապես Ռուսաստանի հետ։ «Միակ պետությունը,— դեռևս 1876 թ. հեռառեստրեն գրում էր նա,— որի վրա հայերը կարող են հույս դնել, այդ Ռուսաստանն է»¹³։

«Մշակը» ողջունեց 1878 թ. Զեյթունի ապստամբությունը¹⁴։ Այս շրջանում Արծրունին «Մշակի» մի քանի առաջնորդողներում այն միտքն էր արժարժում, թե սուլթանական լծի տակ ճնշվող ժողովուրդների համատեղ պայքարով միայն հնարավոր է խորտակել թուրքական անարդ կարգերը։ Փոքր ինչ ուշ, 1882 թ., «Գաղթականությունը թուրքաց Հայաստանից» առաջնորդողում վերոհիշյալ միտքն առավել հստակ ձևակերպելով, Արծրունին գրում է. «Հայաստանի թուրք երկրագործը, քուրդ հովիվը կամ քուրդ մշակ բանվորը չեն կարող երկրագործ, բանվոր, արհեստավոր հայի թշնամիներ լինել, բանի որ նրանց բոլորի վիճակը մի է, նրանց դիրքը, նրանց հարաբերությունները դեպի հայ վաշխառուն, դեպի թուրք տեղական պաշտոնյան, դեպի քուրդ բեյը միատեսակ են։ Հայաստանցի հայ, թուրք և քուրդ ստորին դասի մարդիկ նույն շափով ճնշվում են հայ վաշխառուից, թուրք պաշտոնյայից և քուրդ բեյից կամ ավաղական պետերից։ Ուրեմն երկրագործ, մշակ. արհեստավոր թուրքի, հայի և քուրդի մեջ համեմատելիությունը, եղբայրությունը հնարավոր է. քանի որ նրանց բոլորի վիճակը մի է»¹⁵։ Ե՛վ պատերազմի շրջանում և՛ նրանից հետո պահպանողական հոսանքը արևմտահայության հույսը կապում էր եվրոպական դիվանագիտության, հատկապես Անգլիայի միջամտության հետ։ «Տաճկահայերը,— գրում էր «Մեղուն» (1878 թ. № 15),— պետք է հուսան անկասկած եվրոպայից ազատագրություն»։ Արծրունին ղայրույթով դատապարտեց լրագրի այս դիրքորոշումը, գրելով, որ «Անգլիան գործում է հօգուտ Թուրքիայի, նրա նպատակն է ոչ թե միացնել, այլ ձեռք գցել Հայաստանը»։ Հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցերն արժարժող Արծրունու, ի՛նչպես հողվածները համակված են ջերմագին սիրով դեպի հայ ժողովուրդը, նրա արդար իրավունքն ու դատը և բուն ատելությունը դեպի օտարերկրյա ղավթիչները, բուրժուական մեծ պետությունների հայասիրական կնիք խոստումներն ու երկերեսանի քաղաքականությունը։

«Մշակի» արժարժած մտքերն ու գաղափարները լայն տարածում էին գտնում, բարձրանում էր լրագրի հեղինակությունն ու կշիռը, այն դառնում էր համազգային տրամադրությունների արտահայտիչ։

13 Գ. Ա., Թուրքաց հայերի դատը (առաջնորդող), «Մշակ», 1880, № 160։

14 Գ. Ա., Զեյթունի ապստամբությունը (առաջնորդող), «Մշակ», 1878, № 165։

15 «Մշակ», 1882, № 103։

Մեծ է «Մշակի» դերը հայ վիպագրության զարգացման ասպարեզում: Այս գործում ակնառու է հատկապես Բաֆֆու ծառայությունը: «Մշակում» տպագրվող պատմվածքներով, վեպերով («Ոսկի աքաղաղ», «Ջալալեդդին», «Խենթը», «Դավիթ Բեկ» և այլն) Բաֆֆին, ինչպես Թումանյանն է ասում, բարձրանում էր, բարձրացնելով «Մշակը»: Թերթը նպաստեց և զարկ տվեց նաև գրական փոքր ձևերի (անկնարկ, պատմվածք, ուղեգրություն) զարգացմանը՝ տպագրելով Բաֆֆու, Շիրվանղազեի, Լեոյի, Փափաղյանի և այլ հեղինակների ակնարկները, պատմվածքներն ու ուղեգրությունները:

«Մշակի» հրատարակության առաջին իսկ տարիներին վերջնականապես ավարտվեց լեզվապայքարը հոգուտ աշխարհաբարի: Հայոց լեզվի զարգացման, հարստացման ուղղությամբ լրագիրը վարում էր որոշակի քաղաքականություն, որի հիմնական գրույթները շարադրվում էին խմբագրի ծրագրային հոդվածաշարում («Լեզու և կյանք», «Հայոց լեզու», «Աշխարհաբար լեզու», «Ժամանակակից հայոց լեզվի մշակությունը» և այլն):

«Մշակի» ուղղությունը, — իրավացիորեն գրում է Բաֆֆին, — խիստ բերրար աղբյուրություն ունեցավ վիպագրության վրա: Նրա օրերում վիպագրությունը ավելի լայն շրջանակի մեջ դրեց յուր պատկերները... Սա ավելի խոր թափանցեց զանազան դասակարգերի բոլոր ծալքերի և բոլոր խավերի մեջ և երևան հանեց նոր տիպարներ, նոր երևույթներ: Քննադատական ոգին միացավ արհեստի գեղեցկության հետ և վիպագրությունն ավելի ռեալական հողի վրա դրվեցավ: «Մշակի» օրով, — շարունակում է Բաֆֆին, — գավառական բարբառները ընկան և գրական լեզուն առաջին անգամ համարձակություն ունեցավ վեպի լեզու լինելու»¹⁶:

Բացառիկ է «Մշակի» դերը հայ քննադատական, գեղագիտական մտքի, թատրոնի և ինքնուրույն դրամատուրգիայի զարգացման ասպարեզներում: Այստեղ տպագրվեցին Բաֆֆու հիանալի գրախոսականները Սունդուկյանի «Էլի մեկ դոհ», «Քանդած օջախ» պիեսների, Գ. Սրվանձտյանի «Գրոց-բրոց» ժողովածուի մասին: «Մշակի» էջերում իրենց քննադատական մկրտությունն ստացան Լևոն (Ա. Բաբախանյանը), Հ. Սուրխաթյանը և ուրիշներ: Հայ, ռուս, եվրոպական ականավոր գրողների մասին Արծրունու գրած հոդվածները, թատերական գրախոսությունները նախանշում են հայ քննադատական մտքի մի փայլուն շրջան: Այդ հոդվածներում արծարծված են ռեալիզմի, տիպականության, ռոմանտիզմի, նատուրալիզմի, դրականության տեսության և բաղմամբի վրա հարցեր: Արծրունին հատուկ հովանավորում անդրադարձել է Ալիշանի, Նազարյանի, Բաֆֆու, Սունդուկյանի, Պատկանյանի, Շիրվանղազեի, Տյուսաբի ստեղծագործություններին և ասել իր հեղինակավոր խոսքը: Սունդուկյանի «Պեպոյի», Շիրվանղազեի «Իշխանուհու» մասին գրած նրա հոդվածները աչքի են ընկնում արծարծված հարցերի կարևորությամբ, դրամատուրգիական հարցերի իմացությամբ: Կյանքի ճշմարտացի արտացոլման, իրականության արատների անողոք խարաղանման մեջ Արծրունին տեսնում էր գրականության կենսունակությունը, վերափոխիչ նշանակությունը: «Աղգերի հասարակական

¹⁶ Բ ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հատ. 10, էջ 159—160:

և մանավանդ քաղաքական կյանքի վերածնության վրա,— գրում է Արծրունին,— զլիսավորապես ներգործություն են ունեցել անխնա ինֆնաֆնություն մեքողին հետևող գրողները, հասարակական ակստերի անխնա մտրակողները... Այն ըոպեից, երբ մի ազգի գրականության մեջ սկսում է հայտնվել անխնա ինքնաքննություն, կարելի է հաստատ ասել, որ այն ազգի համար սկսվում է հասարակական և քաղաքական մի նոր դարագլուխ...»¹⁷։

Քննադատական ունալիզմի ներկայացուցիչներին Արծրունին համարում էր «ամենաերեկյի գրողները» և նշում նրանց անունները՝ Դիկկենս, Վոլտեր, Բալզակ, Դոդե, Գոգոլ, Օստրովսկի, Սալտիկով-Շչեգրին, հայ գրականության մեջ՝ Սունդուկյան, Բաֆֆի։ Նախորդ տասնամյակի հայ վիպագրության հիմնական թերությունը համարելով «մտրակող ուղղության» պակասը, Արծրունին «Մշակում» հայ գրողների առաջ խնդիր էր դնում ստեղծել ինքնաքննությամբ հագեցված այնպիսի երկեր, որոնք «ժողովրդի վրա ազդելու ունակություն ունենան»։ Նա շատ բարձր էր գնահատում գրականության և արվեստի հասարակական նշանակությունը։ Գրականության կոչումն է կրթել ժողովրդին, «գարգացնելով նրա մեջ արդար մտքեր, նշմարիտ գաղափարներ, նուրբ գեղարվեստական նաշակ, օգտավետ հմտություններ, մարդասիրական բարձր զգացմունք, այդ բոլոր լայն նշանակությամբ»։ Արծրունին գրողին համարում էր հասարակական գործիչ։ Ռեալական դարոցին հետևող հեղինակի խնդիրն ըստ նրա «պետք է լինի զարթեցնել այս կամ այն հասարակական հարցը, դնել մեր առջև մի հասարակական խնդիր, որ մեղ մնում է լուծելու, առաջ մղել ժամանակակից հասարակական կյանքի մեջ օրական (իմա՝ արդիական— Ե. Պ.) հարց դարձած մի երևույթ» (ընդգծումները հեղինակինն են)։ Լուրջ հետաքրքրություն են ներկայացնում Արծրունու մտքերը տիպականության մասին. նրա բնորոշումը համընկնում է իր ժամանակի ղեղադրողական մտքի մի շարք ներկայացուցիչների բնորոշմանը։ Արծրունին տիպը համարում է հավաքական բնավորություն, «հասարակական անձնավորություն»։ Համաշխարհային գեղագիտական միտքը ձևի և բովանդակության ներդաշնակությունը համարում է գրական երկի գեղարվեստականության ստույգ չափանիշ։ Պաշտպանելով այս տեսական դրույթը, Արծրունին հորդորում էր հայ գրողներին տալու «մշակված ձևի և մտքի կողմից կատարյալ գրվածքներ»։

Արծրունու խորին համոզմամբ ամեն մի ժողովրդի գրականությունը արտահայտություն է տվյալ ազգի կյանքի, նրա զարգացման աստիճանի։ Հայ գրականությունը, ըստ Արծրունու, «իսկ գեղարվեստական մշակության ձևով, իր մտքերի խորությամբ ևս է մնացել եվրոպական որևէ ազգի գրականությունից»։ Մեր խնդիրն է հասնել նրան։

Իր գոյության ողջ ընթացքում «Մշակը» վարել է հայ և ռուս ժողովուրդների անխախտ բարեկամության, զրական, մշակութային կապերի ընդլայնման հետևողական քաղաքականություն։ Լրագրի ռուսական կողմնորոշումը լիովին համընկնում էր հայ ժողովրդի քաղաքական ապահովության, տնտեսական զարգացման և ազատագրության կենսական շահերին։ Ռուսական օրինենտացիան Գրիգոր Արծրունու մոտ հաստատ համոզմունք է դառնում դեռևս 60-ական թվականներին։ Ի՞նչ կլինե՞ր հայերի կյանքը, եթե չլինե՞ր Ռուսաս-

17 Գ. Ա., Այդ անհրաժեշտ է (առաջնորդող), «Մշակ», 1878, N 123։

տանը հարցին Արծրունին 1868 թ. սլատասխանել է. «Միշտ միևնույն տեղը կմնայինք, ինչպես մնացինք հալերս հինգ կամ վեց դար, լուռ, անշարժ, կյանքի նշան ևս ցույց չտալով, մինչև որ բախտավորապես հանեց մեզ մեր խոր քնից մեր անշարժությունից ուսական տերության աղդեցությունը»¹⁸:

Նշելով Անդրկովկասի, Հայաստանի տնտեսական-քաղաքական սերտ կապերն ու կախումը Ռուսաստանից, Արծրունին դրանից հանդում էր գործնական հետևությունների՝ մայրենի լեզվի ուսուցման հետ շմոռանալ ուսաց լեզվի ուսուցումը, թարգմանական պիեսներ բեմադրելիս՝ նախ դիմել Դոգուին և Օստրովսկուն: Ռուս մեծ գրողների՝ Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Օստրովսկու, Նեկրասովի, Գոնչարովի, Սալտիկով-Շչեդրինի մասին «Մշակում» տպագրված Արծրունու հոդվածները, մտքերը աչքի են ընկնում բնութագրումների ճշտությամբ, հասարակական կարևոր եզրահանգումներով և մինչև օրս էլ չեն կորցրել իրենց թարմությունն ու արժեքը: Տուրգենևի ստեղծագործության մեծագույն արժանիքը Արծրունին արդիական հնչեղությունն էր համարում: «Նա մնաց իր բոլոր հեղինակությունների մեջ ուս բանաստեղծ,— գրում է Արծրունին,— արտահայտիչ ուսական օրական, կենսական, բարոյական կարիքների»¹⁹:

Օստրովսկին Արծրունու համար կատարյալ արվեստագետի օրինակ էր, որի երկերը շնչում են արդիականությամբ, հասարակական խոր բովանդակությամբ և մտրակող ուղղությամբ: «Մի մեծ ուս գրողի մահը» հոդվածում («Մշակ», 1889 թ., № 49) Արծրունին տվել է Սալտիկով-Շչեդրինի ստեղծագործության հիանալի բնութագիրը, նշել մեծ գրողի երգիծանքի մերկացնող ուժը, սթափման ոգին, ռեակցիայի և հետամնացության դեմ ուղղված հզոր ձայնը, որոնցով նրա երկերը դարձել են «ուսաց ժամանակակից կյանքի ամենահավատարիմ նկարագիրը»: XIX դարի ուս գրականության արտակարգ ծաղկմանը քիչ չեն նույստեղ նաև ուս գրական քննադատությունը, Բելինսկին, Դոբրոլյուբովը, Չերնիշևսկին: Արծարծելով գրական բանավեճերի անհրաժեշտությունը, Արծրունին նշում է, որ «Բանակովի միջոցով էր զխավորապես, որ ուսաց գրականության ամենապայծառ ուժերը, ինչպես, օրինակ, Բելինսկի, Դոբրոլյուբով և այլն՝ կարողացան արտահայտել իրանց ամենալավ, ամենանշանավոր դադափարները»²⁰: Ե՛վ այս, և՛ հետագա տարիներին «Մշակը» իր էջերում շարունակ պրոպագանդում էր ուս գրականության առաջավոր ավանդույթները, ուս ականավոր գրողների ստեղծագործությունների դադափարական հարստությունը, արդիական հնչեղությունն ու գեղարվեստական վարպետությունը:

5

«Մշակը» ընդլայնեց հայ լրագրության, մամուլի ընդգրկման շրջանակները, արձագանքելով ժամանակի հայ, ուս, եվրոպական, միջազգային կյանքի կարևոր շատ հարցերին ու իրադարձություններին (Արևելյան խնդիր, 1877—1878 թթ. ուս-թուրքական պատերազմ, հայկական հարց, Անդրկովկասի տըն-

18 Գ. Արծրունի, Աշխատություններ, հատ. առաջին, Թիֆլիս, 1904, էջ 86—87:

19 Գ. Ա., Ի. Ս. Տուրգենև, «Մշակ», 1883, № 116:

20 Գ. Ա., Լրագրական բանակովի օգուտը (առաջնորդող), «Մշակ», 1890, № 46:

տեսական կյանքի զարգացման հեռանկարները, հայ-ռուս մշակութային կապերը և այլն)։

«Մշակը» եվրոպական աիպի լրագիր էր։ Նա ստեղծեց մշտական թղթակիցների և կայուն աշխատակիցների մի ստվար խումբ, որոնց անկոտրում ջանքերով ապրում և հարատևում էր լրագիրը։

Թե որքան լավ է կատարել «Մշակը» իր առաջ գրված վերոհիշյալ կարևոր խնդիրը, ապացուցում է լրագրի աշխատակիցների պատկանելի ցանկը։ Տարբեր տարիներին «Մշակին» աշխատակցել են մեր գրեթե բոլոր ճանաչված գրողները (Բաքի, Սունդուկյան, Շիրվանզադե, Աղայան, Պոռշյան, Մերենց, Լեո, Ա. Արփիարյան, Վ. Փափաղյան, Լ. Մանվելյան, Սանդալ, Ադելյան, Թլկատինցի, Ջավախեցի, Ատրպետ, Ստ. Զորյան և ուրիշներ), բանաստեղծները (Ռ. Պատկանյան, Ս. Շահազիզ, Ա. Մատուրյան, Հ. Թումանյան, Վ. Տերյան և այլն), շատ գիտնական-բանասերներ (Ն. Բյուզանզադե, Գ. Տեր-Մկրտչյան, Ա. Զոպանյան, Ս. Պալասանյան, Ստ. Մալխասյան, Գ. Խալաթյան և այլն), հասարակական գործիչներ, խմբագիրներ, քննադատներ։

Արժրունու մահից հետո (1892 թ. դեկտեմբեր) սկսվում է «Մշակի» գործունեության նոր շրջանը, որ նշանավորվեց բուրժուական հարաբերությունների հաղթանակով։ Երևան էին եկել նոր ուժեր, հասարակական նոր հոսանքներ։ Կյանքը նոր խնդիրներ էր առաջադրում, նոր լուծումներ պահանջում։ «Մշակը» վերջնականորեն ստացավ լիբերալ-բուրժուական ուղղություն։ Նկատենք, որ այդ շրջանում անգամ, օգտագործելով լեզալ մամուլի ընձեռած հնարավորությունները, «Մշակի» էջերում հանդես են եկել նաև Ստ. Շահումյանը, Ալ. Մարտունին, Արշ. Մելիքյանը, Հ. Հակոբյանը, Ս. Խանոյանը։

Մեծ է Դրիգոր Արժրունու «Մշակի» պատմական դերը հայ հասարակական կյանքի, հայոց լեզվի, հայ գրականության, մամուլի, թատրոնի, հրապարակախոսության, քննադատական, գեղագիտական մտքի զարգացման, հայ. ռուս, հարևան և այլ ժողովուրդների գրական-մշակութային կապերի ընդլայնման գործում։

К СТОЛЕТИЮ ГАЗЕТЫ «МШАК»

Доктор филол. наук Е. М. ПЕТРОСЯН

(Резюме)

1-го января 1872 г. в городе Тифлисе (Тбилиси) под редакцией Григора Арцруни был выпущен в свет первый номер газеты «Мшак». Велика роль этой газеты в развитии общественной и умственной жизни армян. «Мшак» боролся против всего устаревшего, что отжило свой век и задерживало развитие нового, прогрессивного, что стояло на пути становления буржуазных общественных отношений. Газета последовательно держалась курса солидарности армянского, русского и закавказских народов, укрепления и расширения экономических и культурных связей между ними. Во время русско-турецкой войны (1877—1878 гг.), как и в последующие годы, «Мшак» горячо выступал в защиту освободительной борьбы западных армян против султанизма, при-

держиваясь убеждения, что освобождение армянского народа осуществимо только с помощью России. Содействуя и поощряя развитие армянской литературы, газета была сторонницей критического реализма в армянской литературе. Руководствуясь этим принципом, она оценивала творчество выдающихся армянских, русских, европейских писателей. «Мшак» способствовал расширению кругозора армянской печати, считая нужным откликнуться на все важные события и культурные явления современности. В ней сотрудничала большая часть армянской передовой интеллигенции: писатели, общественные деятели, критики и т. д.